



# Ա Մ Ս Ա Գ Ի Ւ

ԵՐԳԵՅԻՆ ԲԵԼԵՈՒՐԵԿԵՆ ԵՒ ԳՐԵԳՐԵԿԵՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՒ 8.

ՀԵԶԱՆ ՄԻԱՄԵԱՅ

1 ՕԴՈՍՑՈՒ 1866

## Ա Զ Գ Ա Յ Ի Ւ

ՀԵՆԴԻՍ ՏԵՐԵՎԵՐՉԻ ԸՆԹԱՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. Ե Ս Յ Ե Ե Յ Վ

ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՅՈՒԼԻՍ 7ին երկրորդ տարեդարձը կատարեց Ա. Աթոռս տօնախրմակութեան Ամենապատիւ Արքազան Պատրիարք Հօր՝ յաւուր յիշատակի Եսայեայ մարգարէին։ Առաւօտուն հանդիսաւոր սկատարագ մատոյց Արագկերու Առաջնորդ Գերապատիւ Գրիգոր Արքազան Արքեպիսկոպոսը, Պէտքի արձակման ժամուն եկեղեցական խումբը Ամենապատիւ Արքազան Հօր ընկերանալով մինչեւ ի վեհարանը, և սովորական արարողութենէն և շնորհաւորութենէն ետքը, երկու աշակերտ մին նախկին դպրոցին և միւսը յառանդաւորաց ու-

սումնարանին դասէն մէկ մէկ ճառ կարդացին, զորոնք քիչ մի ետքը մէջ պիտի բերեմք։ Ճառերը լրանալէն յետոյ Արքազան Պատրիարքը ազդուխուքերով ատենաբանութիւն մի ըրաւ քառորդի մի չափ, որոյ թէ եւ ոչ զօրութիւնը, գոնէ անոր իմաստը հոս բացատրեմք համառօտ։

“Ուարդս իւր փառասիրութեան ախտէն մղեւալ՝ երբ պարծենալու ըլլայ, նախ իւր ծնած քաղաքը մէջ կը բերէ, անոր հնութիւնը, մեծութիւնը, աթոռանիստ կամ թագաւորանիստ ըլլալը կ'ուզէ իրեն անձին

փառք և պարծանք համարել։ Եթէ սոյն պարծանքս իրօք մարդոյս անձնական արժանաւորութեանը կը նը պաստէ, իրաւամբք պիտի կարենամք մեք եւս պարծիլ Երուսաղեմաւ, որ ուրիշ շատ հոյակապ և զարմանակերտ մայրաբաղաքաց վերայ ունի իւրեան յատկացեալ անուններ, այն է սուրբ եւ աստուածային կոչումները՝ որով աշխարհիս մէջ եղական և աստուածեղէն կրկին օրինաց իսանձարուր կը համարի։ Ո՞ք որ սոյն Քրիստոսակոմ քաղաքիս բնակիչ կը կոչիմք, յորում ծնաքս ըստ հոգւոյ և ըստ օծման սուրբ Հոգւոյն, կրնամք արդեօք և իրաւունք ունիմք պարծենալու։ Ես յո, պարծանք կը համարի մեզ սուրբ քաղաքս, եթէ մեր կոչմանը հաւատարիմ մնամք, և տէրունական սուրբ Խաչը, զոր Առաքեալլ միակ պարծանք կը համարի մեզ սուրբ քաղաքս, եթէ մեր կոչմանը հաւատարիմ մնամք, և տէրունական սուրբ Խաչը, զոր Առաքեալլ միակ պարծանք կը համարի իւր անձին, մեր ուսը բառնալով՝ Ճշմարտութեան շուղին վերայ քալելու ըլլամք, և ջանամք Հոյաստանեաց սուրբ եկեղեցւոյս և բովանդակ ազդիս և Ա. Եթուոյս պայծառութեանը համար անխօնջ վաստակել։ Եւ ինչով կը լոյս պայծառութիւնը, արդեօք լուսաւոր կանթեղներով, ոսկեթել պատմուաններով, և զարդարուն կարաօիներով, բազմախորափկ սեղաններով. քաւ լիցի. գիտեմ որ դուք ալ ինձի հետ մէկտեղ և ոչ մէկը իրեւ սահման պայծառութեան կ'ընդունիք։ Ես քիչ մի յետոյ պիտի ըսեմ իմ կարծիքս, հիմակ ուրիշ մէկ տես սութեան կ'ուղեմդարձնել ձեր ուշը։ Երուսաղէմի բնէ անտի ինչպէս նոր՝ նոյնպէս և հին օրինաց ժամանակ լուսաւորութեան վառարան եղած էր. Այսն օրինատու էր և Երուսաղէմ աւանդարան աստուածեղէն բանից և վարդապետութեան։ Ես ն

պէս և Քրիստոս տէրն մեր հոս հաստատեց իւր աստուածախօսութեան լարանը. հոս դաստիարակեց կը թեց զիւր աշակերտները, և առաքեց զանոնք ի սփիւռս տիեզերաց. ասկէ ծաւալեց Ճշմարիտ լոյսը, որով ձկնորսաց ու ռամիկ ժողովրդոց միոքը լուսաւորեցաւ, սրաւերնին բարոյապէս կը թեցաւ, վարդերնին ու բարբերնին նոր ու Աւետարանին կաղապարովն կերպաւորեցաւ։ Ո՞ք՝ մեր ազգը ունի արդեօք իրաւունք պահանջել մեղմէ սոյն Ճշմարիտ լուսաւորութեգոնէ մէկ կոյծը ընդունելու։ Ես յո, կարի իրաւապէս, և այս կայծը ինչ չովկ կրնամք հաղորդել անոնց. ուսման միջոցաւ, այն է հաստատուն և բարեկարգ դպրոցներով։ Ահաւասիկ ինքնին բացատրեցաւ իմ կարծիքս ալ ի մասին պայծառութեան։

« Ես Ճշմարիտ պայծառութիւնը, որով միայն կրնայ պարծիլ Ա. Եթուու երեք բանի վերայ կայացուցած եմ, նախ՝ յառանգաւորաց դպրոցի, երկը ըրդ՝ թանգարանի, երրորդ՝ Տպարանի։ Դպրոցը արդիւնքներ պատրաստելով կու տայ յաւանդ թանգարանին, և թանգարանը ի ժամանակի իւրում զանոնք կը յանձնէ Տպարանին, և Տպարանը ի լոյս ընծայելով կը մատակարարէ այն արդիւնքները ի վայելումն ազգին և ի պատիւ սուրբ Եթուոյ։ Ես երեք հաստատութիւնները գահակալութեանս օրէն ի վեր, և կը համարձակիմ ըսել՝ արեւալայութեանս ժամանակէն ի վեր իմ մտացա գլխաւոր առարկայ եղած են, և բոլոր ջանքս գրեթէ ասոնց վերայ ամփոփուած է։ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, որոյ յանձնած եմ զիս և բոլոր ձեռնարկութիններս, ինքը պիտի աջողէ և պատկէ զանոնք. աստածածային օգնութեանը վերայ դրան

ակնկալութեանս պտուղը սկսած եմ արդէն ընդունել. յառանգաւորաց դպրոցիս աջողութիւնը լսութոյ ու զորմութեամբը ապահովուած է, աղ դային մեծանուն բարերար մի իբրեւ Ուկենաս (1) հանդիսացեալ իւր աջը կու տայ ինձ և իմ քայլերս կը զօրացընէ, ուրիշ բարերարներ եւս իւր հետը ձգելով իւր բարի օրինակովը:

“ Ինչպէս ասկէ առաջ մեր նախկին դպրոցը, նոյնպէս և հիմայ յառանգաւորաց դպրոցս յառաջանալու վերայ է. ես ինձ փառք և պատիւ և պարծանք կը համարիմ անոնց արդիւնքները: Աշակերտի մի իւր ուսման ընթացից մէջ թափած մէկ կաթիլ քրոնիքը ինձ համար երկնային ցող է՝ տղիտութենէ երաշտացեալ երկրի վերայ իջած: Առւրբ Աթոռոյս սանուց ամեն առթիւ խօսեցած ճառերը և անոնց պարունակութիւնը՝ որ անշուշտ իրենց ներքին զգացմանց վկայութիւնն է, իմ սիրու յուսով կը լեցընեն՝ թէ իմ Ուկաբանութեանս ջանքերն ու աջնատութիւնները աջողութեամբ պիտի պսակին և իրենց նպատակին հասնին: Օ անազան առիթներու մէջ խօսեցած եմ, թէ յառաջ քայլեմք. ետ մնացողին բաժինն է տղիտութիւն ու նախատինք: Ես պիտի քշեմ վարեմ յառաջադիմութեան կառքս դէպ ի լուսաւորութեան տսպարեցը. չպիտի նայիմ ճանապարհին դժուարութիւնները. իմ աչքիս ամեն սար ու ձոր լայնարձակ դաշտ են. թէ պէտեւ անոնց մէջն զորոնք իմ հետո բռնի կը քաշեմ կը տանիմ, կառքին սաստիկ ցնցում մէն գահամվէմ ինկնելու ըլլան եւ կամ զիրենք կամաւ ետ թողուն, ես գարձեալ պիտի քշեմ մինչեւ որ հաս-

նիմ այն նպատակին՝ ուր տեղ քաղաքանացեալ ազգերը հասած են, ուր տեղ որ Քրիստոսական կրօնքն ու Ճշմարիտ լուսաւորաւթիւնը կը յաղըթանակեն: Վ. յս է, ինչպէս կը յուս սամ, իմ օրհնեալ Ազգիս փափաքն ալ, և յոյս ունիմ գարձեալ որ չպիտի զանայ հայթայիթել ամեն միջոց և օգնութիւն, որպէս զի Ուկաբանութիւնս՝ որ արդէն արտամադրուած է նկարագրած ճամբուս մէջ մոնելու, անխափան յառաջադիմէ ինմին՝ ի պարծանս Ա. Աթոռոյս և յուրախութիւնի սրտի բարեսէր Ազգայնոցս ո:

Այն հոգեւոր հանդէսէս ետքը, թէ առաւոտուն եւ թէ երեկոյին մարմնաւոր սեղաններ եւս պատրաստուեցան քան զովովրականէն աւելի ճոխութեամբ: Արեկոյեան սեղանին հրաւիրուած էին նաեւ քաղաքացի հայ ժողովրդոց գլխաւորները, քանի մի ուխտաւորք և Շէթլէմյի քանի մի ազգայինք: Անզանատունը ըստ բաւականին զարդարուած էր կանթեզօք եւոյն, կերակուրները թէ եւ չափաւոր՝ բայց ընտիր. ամեն ինչ կրօնական պարկեշտութեամբ և հոգեւոր ուրախութեամբ խառնած: Շամակը որ կը մատուատակէր մերթը ընդ մերթ, ամենուն սրտին մէջ տարօրինակ ցնծութիւն մի կ'ազդէր, և իւրաքանչեւր բազմականք և սեղանակիցք Ազգին պայծառութեանը և կենդանութեանը համար բաց ի հրապարակաւ ըրած օրհնութիւններէն, ըւելեայն իրենց սրտին մէջ ես և կ'օրհնէին, որոյ ընորհաց պառուզն էր զոր կը վայելէին: Այն հոգեխառն ուրախութիւնները կը յիշեցընեն մեզ այն խնջորը, զոր գեղացի հասրակութիւնը տուաւ Դիւտ կաթողիկոսին: Այն գիւղին մէջ էր առանձ

(1) Հոյս կ'ակնարկէ գւր. Պաշտամ կորագունդային:

Նացած նաեւ խորենեան ծերունին, որ խրախճանութեան մէջ յանձանօթը բազմած հոգեւորապէս կը զմայլէր, հրաւիրեցաւ ինքն ալ ի կարգի իւրում երգ մի խօսելի պատիւ Արքազան կաթողիկոսին . շատ ստիպումէն յետոյ սկսաւ երանելին երդել այն նշանաւոր երգը՝ որ կը սկսի. “Ով արքայակերպ տէր Քահանայապետ” ։ Այն գոլասանական տաղը մատնեց զծերունին Առվակս, զոր մինչեւ ցայն վայր վախճանեալ կը համարէին . եւ լաւ տեղէն կաթողիկոսը, փարեցաւ անոր վիզը . լացին երկորին եւս ուրախութեան կաթիներ վաղցընելով իրարու սրբատիպ ու ալեզարդ կուրծքին վերայ :

Այս ուրախութենէն ընդհատ չէր նաեւ սրբագումար Արքայանութես խրախճանութիւնը, ուր հոգեւոր ցնծութեան շարականներուն և երգերուն ձայնը սեղանատան քարուկիր գմբէթներուն և կամարներուն մէջ քաղցը արձագանքներով կը կըրկնուէր : Հոն բաժակին անուշութիւնը շատերուն սրտին մէջ եղած զգացմունքները կը մատնէր, որոնք շարժեալ յառաջիկայ հոգէզմայլ տեսարանէն, տեղերնէն ելնելով՝ կ'առաջարկէին իկենդանութիւն օրհնեալ Ազգին և ազգային գլխաւոր բարերարաց և իշխանաց և երեւելեաց գինի խմել. Այնպէս և վասն կենաց Արքազան Պատրիարքաց Արուսաղեմի և կատանդնուպօլսոյ, և վասն ընդհանուր միաբանութեան և հրաւիրելոց բաժակ առաջարկուեցաւ : Ամենապատիւ Արքազան Հայրը, որ ոչ գինեալ՝ այլ առաւել համագումար միաբանութեանս և ժողովրդոց ուրախութեամբը զմայլած, պարագայիս համեմատ համառօտ բայց աղդու ատենաբանութիւն ևս մի ըրաւ,

որով իւր չնորհակալութիւր կը յայտնէր միաբանութեան ցոյց տուած համակրութեանը և մտերիմ զգացմանցը, եւ վերջացաւ ուրախութեան հանդէսը ամենայն բարեկարգութիւնը և կրօնաւորական համեստութեամբ :

Ահաւասիկ խօսուած ձառին մէկը .

Ամենապատիւ և Ահավաս

Տէր իմ:

Եւ ոչ իսկ հզօրագունի մնայր արդեօք ատեանս Ճարտարախօս շըրթանց առ ի թարգման կալ աստանօր զգացմանց չնորհապարտ ‘Զեր որդւոց, զի ոչ ուրեք երեւեցաւ երբեք լեզու վսեմախօս առաւել Ճարտարի յայտնութիւն զգացմանց խորհրդակիր սրտի, քան զնոյն իսկ սիրտ աղը բիւր անսպառելի իւրոցն իսկ վեհ զգացմանց . վասնորոյ իրաւամբ լուեցեն աստանօր հուետորական դասուց Ճարտարութիւնք, լուեցեն հնչմունք քաղցրանուագ երգոց, զի ինքնին պարզապէս արտափայլեսցի անկեղծ զգացում երախտապարտ սրտից ծնողասէր Զեր որդւոց :

Ազէ, ուրեմն խօսեցարուք ո՛ կենդանի տաճարք մարդկային խորհրդոցն, և տուք ինձ զարձագանգս . եթէ զի՞նչ այս ձայնք և երգք հանդիսից զարթուցեալգրաւեն զսիրտս մեր այսօր, զի՞նչ այս բաղնիւն ներքին զգացմանց . . . .

Ի՞ն չնաշխարհիկ աւուրս մեծի և բերկրապատար խնդութեան զգացմանց համասիրտ ժողովելոցս յայս հանդէս շքեղաշուք . ուր թէեւ սիրտիմ բարեալսէ, սակայն հարկ աւուրս թելադիր խորհրդոցս մատչի զարժանին հատուցանելդրուատեաց վերտուն արդարեւ ում այլ ումեք՝ քան եթէ Զերդ Աստուածընտիր Արքազնութեան նուիրել զերախտադիտու-

Թիւն զանհրաժեշտ պարտիս յաղագս  
ազդասէր ոգւոյ Արբազան Հօրդ ի  
մեծահանդէս տարեդարձի Վնուանդ  
շնորհաշուրք . զի եթէ դուք անխու  
սափելի յօժարութեամբ սրտի կամիք  
մի զմից կնի բարդելի վերայ մեր ան  
կշու բարեաց և շնորհաց հանդէս գո  
րովայեղ , և Հայրական գդուանք և  
քաջալերութիւն յառաջադիմութե .  
ապա և մեր է պարտ անհանջելի  
զքաջափառ խնամոցդ հարկանելհըն  
չսկ ընդ ամենայն երկիր . զի և պատ  
կեր աւուրս ի նոյն կարդայ ասպա  
րէզ յօրինաց քաջաքակիրթ ազդաց  
և յիմաստասէր աղանց սովորութենէ  
վարդապետեալ :

Ապաքէն ակներեւ տեսանին յօ  
ժարութիւն բարեսէր կամոցդ յաղ  
գօդուտ միւել ձեռնարկութիւնս , և  
արժանաւորապէս կատարելսգործու  
թեան փութով եւ ճգամբ տքնիլ ,  
եւ յաննախանձ աղբերէ Հայրական  
սիրոյդ ջանայք զՄիաբանութիւն մեր  
համապատուաբար խնամել և երախ  
տագիտութեան սերմանիս միաձեռն  
սերմանելյանդաստունս մոտաց և սըր  
տի մերոյ . եւ անսայթաք առաջնոր  
դութեամբ ձերովլ վիճակել զմեզ ի  
լոյն երկնաւոր իմաստութեան : Ապա  
արդարեւ արժան և յիրաւի է մա  
տուցանել զնորհակալիս մեր , որ ըդ  
բազմաց միանդամայն ի ձեզ բովան  
դակէք զինամոց հաւաստիս անխոնջ  
աշխատասիրութեամբ . Զեզ միայն ,  
Զեզ հատուցանել արժան է զառաջ  
նապտուզ բարբառ բերանոյս և շր  
նորհապարտ զգացմամբ սրտի բոլո  
րել Աստուածարեալ Վեհիդ պսակ  
վայելահիւս բանից , եւ լիաբերան  
բարեմաղթութեամբ յերգս առնուլ  
զԶեր յաւերժայիշատակ ազգօգուտ  
խորհրդոցդ եւ խնամոցդ փոյթ , որ  
պէս և կարդ բանիս զիսկն ասելբու-

ոըն առնէ ինձ :

Կացցէ ապա եւ մնասցէ յաւերժ  
յիշատակ Զերոյ առաքինութեանց  
ոչ եթէ յիր ինչ ոսկեքանդակ , այլ  
ի մատեան սրտից բերկրելց՝ փորա  
գրեալ անաղարտելի յանձեռամերձ  
դպրութիւնս : Հւ սրբաձայն ալելուս  
արժանաւորացն ի սմին իսկ աւուր  
առաւօտուս՝ հասցէ յականջս Տեառն  
զօրութեանց անձրեւելի վերայ ան  
զուգական բարերարիդ մերոյ զձիրս  
մեծի դժութեան , և պարգեւեսցէ  
Զեզ Տէր , պարագայս քաջաբաստիկ  
ամաց բարեյաջողլ խաղաղութեամբ և  
կեանս անտրտում յերջանկաւէտ բա  
րօրութեան վայելել . աղօթք և չերմ  
պաղատանք համագումար խմբելցոս  
ծխեսցին բարդ իբարդ ընդ աղերսաւ  
հայել պաղատանս երջանկաց առաջի  
Աթոռոյ շնորհացն Աստուծոյ իբրեւ  
զբուրումն խնկոցն անուշից . զի ցո  
շեսցեն երկինք զարդարութիւն և  
զղորմութիւն յօրհնեալ բնակութիւն  
ըստ յայս :

Հւ արդ՝ Արբազան Հայր , ընկալ  
որդեկաց Զերոց զերախտագիտու  
թիւն և զեռնդն շնորհապարտ սըր  
տիցս զգացմանց քան զանհեթեթ բա  
ռիցս յօդաւորութիւն , և պարար  
տասցին սիրտ Վեհիդ ընդ մրմունջ  
աղօթիցս , և ոգի Զեր զուարձասցի  
ի նուէրս փոքրագոյնս՝ որով և բարե  
հաձեւջիք հովանի առնել զդեռաբող  
բոջ անկովքս զգորովլագութ խնամոց  
ձերոց զպարդեւ . և Հայրական յօր  
դորանօք շարժեալ զաջս ազգասէրս  
ոգեւորեսնիք զանիւս ուսմոն յառա  
ջադիմութեան Աւսումնարանի սրբոյ  
Աթոռոյս , որ Զերոցդ առատանուէր  
ջանից և նպաստիցն ակնկալեալ մնայ  
ի քաջ պտղաբերութիւն . և արգա  
սու բերօն բարգաւաճեալ ի հա  
րուստ ամս՝ ըստ աւուրց երկնից յա-

ւերժասցի ի շուք և ի պարծանս սիրելի Ազգիս մերս . Կաեւ ի թեւս ոսկեփետուրս կենսահրաւէրն Ոյահմանադրութեան զյաղթանակս մրցանակաց նորա արդիւնաւորեալ կանգնեօջիք ի պաղպաջուն և ի զովացեալ գագաթունս սրբավայր Երին Ոիօնի , որով և յամենայն քարինս նորա անջինջ քանդակեսցի Զեր անուն Ազգասէր . յոր և մեք որդիքս քո երջանկացեալք պարծեսցուք յաւիտեան :

### Ս. ԲԱՐՄԵՆ ԱՅԱՀՄԱՎԱԾԵԱՆ ՊՈԼՍԵՑԻ

Արշալոյս Արարատեան լրագիրը իւր 782 թուովը սուրբ Ուեսրոպեան գպրոցի տօնախմբութեան Հանդիօին առթիւ քանի մի խօսք կ'ուզդէ Ախօնի , և կը ջանայ ջրել ինչ որ գրած էինք մենք յիշեալ դպրոցի արդի լնթացիցը վերայ : Արշալուսոյ արժանապատիւ խմբագրէն չէինք յուսարերեէք որ մեր գրածները լըդորդունին կոչէ , վասն զի այս բառիս բուն նշանակութեանը ներքեւ անձնական կիրք և ատելութիւն կ'ենթագրի . և անտարակցոյ պիտի գրուշանայր այս ծանր բառը արտասանելէ , եւ մեր տուած տեղեկութեանցը ձշմարտութեան վերայ ինքն ալ մեզ հետ պիտի համոզուէր , երբ իմանայր՝ թէ զանոնք մեզ հազորդողը իզմիրու ու առնմական խմբին մէջէն է , մանաւանդ թէ ուսումնասէր Ինկերութեանքը գործէք մի , որ մասերմաբար հազորդած է մեզ՝ յառակից ըլսալով թէ մեզ և թէ իզմիրու ողջոմիտ և բարեպաշտ հասարակութեան հետ : Կը թողում յիշելուրիշ մասնաւոր գիրերը : Արգս խմբագրիրը երբ որ կարգաց միւս ազգացին լրագրաց մէջ եւս մի եւնցն լըդորդունինք , զրտնք գը-

րողները մեզի պէս հեռաւոր չեն , այլ բուն իսկ եղելութեան ականաւտես , կը յուսամք որ քաղաքավարութեամբ ետ կ'առնու իւր ծանր խօնքը : Ուսումնական Ոսկանեանի ճառուք , զոր խօսեցած է Հռիփիսիմեանց վարժարանին մէջ , մէկդի առնելով կրթութեան վերայ իւր յայտնած տեսսիլները , կը ցուցընէ մեզ միանգամյն անոր հոգին , որ մեր կարծիքները կը հաստատէ : Կրօնը ոչ միայն յիշեալ ճառին մէջ իւր մասն չունի , այլեւ գաղտնի հարուած մի եւս կը րած է , զոր մտադիր ընթերցողը միայն կրնայ նշմարել : Կը սպասենք պարոն Ոսկանեանի միւս ճառին զոր խօսեցած է Ուեսրոպեան գպրոցին մէջ , և երկու սեռի աշակերտաց քննութեանց արդիւնքներուն . և այն ժամանակ մեր տուած տեղեկութիւնները կամ կը հաստատուի և կամ ետ կ'առնուի իբրեւ սխալ բայց ոչ իբրե զրպարտութիւն : Առ այժմ կը փութամբ բարեմիտ հասարակութեան այս ալ ծանուցանել , որ ուսումնական Շնկերութեան սկաշտպանն եւ մեր յօդուածցն ՃՇՄԵՐՏՈՒԹԻՒՆԸ ջրողը Արշալոյս Արարատեանն է :

Յուլիս ամսոյ մէջ Տնօրէն Ժողովը ընտրութեամբ Արժ . Վարդան վարդապետը Ա . Աթուոյս Ուսումնարանին տեսուչ կարգեցաւ : Արժ . Վատթէս վարդապետը Թանգարանի տեսուչ և օգնական նորա Արժ . Վկրափէ վարդապետը : Եիշեալ երեք սուրբ Հարք կը կազմեն նաեւ Ուսումնական նոր խորհուրդը , որոյ անդամ ընտրուած է նաեւ Արժանապատիս Բարդողիմէսոս վարդապետը , նցնալէս և Տպարանի տեսուչ Արժ . Խորէն վարդապետը , որ առայժմ բացակայ կը գտնուի :